

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ

Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱՍ ԲՊՐԱԿԻԿ աճում

1. ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎՈՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՏԵՆՍԻՎ

Բրեստ-Լիտովսկում հաշտության բանակցությունները դեռ չավարտված, արդեն հայտնի էր Արևմտյան Հայաստանի՝ պատերազմի օրենքներով Թուրքիայից երազված հայկական վաղնջական հողերի՝ «Արևելաանատոլիական դավաճանություն» ձևակերպումով, Գերմանիայի ճնշմամբ, հոգեվառքի հասած Օսմանյան կայսրությանը «վերադարձնելու», Կարսի, Արազահայր, Բաթումի մարզերը ուսական գործերից մաքրելու մասին դառն իրականությունը:

Իսկ Կովկասյան ճակատում հաղթանակի հասած Ռուսաստանի կապիտալիստական էր ոչ միայն՝ գերմանական իմպերիալիզմի, այլև պանթուրքիզմի առաջ: Դրանով հայ ժողովուրդն անօգնական կանգնեց թուրքական բիրտ ուժի դեմ մեն-մենակ:

Այդ պարագայում Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, ուժեղ դաշնակից փնտրելու հույսով, Վրաստանի օրինակով, շրջվեց դեպի Գերմանիան՝ չփակելով, սակայն, դեպի Ռուսաստան տանող դռները:

Մինչ այդ Պետրոգրադի Հայկական զինվորական կոմիսարիատի խորհրդի 1917 թ. նոյեմբերի 9-ի որոշմամբ հաստատված պատվիրակությունը, որի կազմում էին կոմիսարի պաշտոնակատար գեներալ Տիգրանովը (կոմիսար գեներալ Հակոբ Բազրատունին բաժնետարկված էր ռազմա-հեղափոխական կոմիտեի կողմից), փոխգնդապետ Մելիք-Փարսադանովը, Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչ Հակոբ Զավրյանը, ոչ հուսադրող հանդեպումներ էր ունեցիլ Ռուսաստանում Գրանսիայի դեսպան Նուլանսի, Պետրոգրադում Ֆրանսիական, անգլիական, ամերիկյան զինվորական առաքելությունների ղեկավարներ զենհրայներ Նիսսելի, Քեռքսի, Զյուլստեի հետ: Պատվիրակության անդամների 1917 թ. նոյեմբերի 20-ին կազմած հուշագրից կանխատեսվում էր դառնում Անտանտի երկրների ներկայացուցիչների սին խոստումները, կոնկրետ օգնության բաղադրություններ, Հայաստանի՝ Ռուսաստանից անջատման մղելու միտումը:

Այս տեսակցություններից հետո սկսվել էին հաշտության բանակցություններ Բրեստ-Լիտովսկում, Խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդն ընդունել էր հրովարտակ «Թուրքահայաստանի մասին», Հայաստանին ինքնորոշում տալու մասին իրենց քարոզչական ճառերով հանդես էին եկել ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը և Անգլիայի վարչապետ Լյուդ Ջորջը: Այդուհանդերձ, չնայած զինադադարին, Կովկասյան ճակատում շարունակվում էր թուրքական հարձակումը: Նման իրավիճակում, 1918 թ. փետրվարի կեսին՝ Հայոց ազգային խորհուրդը որոշեց Գերմանիա ուղարկել պատվիրակություն՝ նպատակ ունենալով գերմանական իշխանություններին ու հասարակությանը ծանոթացնելու առաջին աշխարհամարտի տարիներին և մինչ այդ Օսմանյան կայսրությունում թուրքերի հալաչինք քաղաքականության, Անդրկովկասի նկատմամբ նրանց նվաճողական նկրտումների հետ, շահել գերմանական կառավարության համակրանքը՝ հայ ժողո-

1 Հայաստանի Հանրապետության կենտրոնական պետական պառլամենտ (այսուհետև՝ ՀՀ ԿԳՊԱ), ֆ. 121, ց. 2, գ. 105, թ. 1-4,

վրդին վերահաս կոտորածների և ջարդերի վտանգից փրկելու համար: Պատվիրակության կազմում հաստատվեցին նրա Զամալյանը, Լիպարիտ Նազարյանը (Հայ հեղափոխական դաշնակցությունից) և Գևորգ Մելիք-Ղարաբյուրյանը (Ժողովրդական կուսակցությունից):

Ազգային խորհրդի, ՀՀ դաշնակցության կուսակցության ղեկավարության և Ժողովրդական կուսակցության նախաձեռնությամբ Բեռլին մեկնելու համար ձևավորվում էր մեկ այլ պատվիրակություն, այս անգամ արդեն Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ի մանդատով: Այդ պատվիրակության կազմում առաջարկվում էին Գևորգ Եպիսկոպոս Զորեքչյանը, Գաբրիել սրբազան ձովսեփյանը և Ժողովրդական կուսակցության ղեկավար Միքայել Պապանյանը: Երկրորդ պատվիրակության անհրաժեշտությունը հիմնավորվում էր նախ նրանով, որ «գծվար թե գերմանական կառավարությունն ընդունի որևէ որևէ մարմնի դիմումը, իբրև հայ ժողովրդի ներկայացուցիչ», ապա նրանով, որ «հայ ազգը բացի էջմիածնի Հայրապետությունից, չունի մի որևէ այլ ներկայացուցիչ որպես ճանաչված մեկից»²:

Մինչ քննարկվում էին Ամենայն Հայոց կաթողիկոսի մանդատով պատվիրակություն Բեռլին ուղարկելու հարցը, Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունը (Ա. Զամալյան, Գ. Մելիք-Ղարաբյուրյան) Բաթում-Թուրքիայի Նովոռոսիյսկ-Սևաստոպոլ-Սիմֆերոպոլ ճանապարհով մարտի 25-ին հասավ Մոսկվա: Լ. Նազարյանը Պետրոգրադից Մոսկվա ժամանեց ապրիլի 7-ին³:

Պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան Պետրոգրադից նոր Մոսկվա տեղափոխված խորհրդային Ռուսաստանի ազգությունների գծով ժողովրդական կոմիսար Ի. Ստալինի, ռազմական գծով ժողով Լ. Տրոցկու, արտաքին գործերի գծով ժողովի տեղակալ Լ. Կարախանի, քաղաքական, հասարակական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Անդրկովկասի և Հայաստանի իրավիճակի մասին Հայոց ազգային խորհրդի պատվիրակները զեկուցումներով հանդես եկան ժողովրդական ազատության կուսակցության Կենտկոմում⁴:

Ինչպես վկայում են պատվիրակության անդամները և փաստաթղթերը, Ստալինը, Տրոցկին, Կարախանը, խորհրդային Ռուսաստանի և բոլշևիկյան կուսակցության այլ ղեկավարներ հայկական պատվիրակությանը ցույց են տվել գործնական օգնություն և աջակցություն: Պատվիրակության անդամների խմբագրությամբ է կազմվել Ռուսաստանի Արտաքին գործերի ժողովում մարտի 1918 թ. մարտի 31 (ապրիլի 13-ի) հուլիսից զերմանական իշխանություններին՝ ստորագրված Գ. Զիլեռիսի և Լ. Կարախանի կողմից⁵:

Պատվիրակությանն աջակցելով Գերմանիա մեկնելու հարգում, Տրոցկին խորհուրդ էր տվել անպայման ներկայացնել Կարսի և Բաթումի ազգաբնակչության բողոքը⁶, Եվրոպայի ժողովուրդներին թուրք զավթիչների դեմ բողոքի կոչով գիմելու նպատակով պատվիրակության տրամադրության տակ

² Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, դ. 176, թ. 1—12:

³ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, դ. 28, թ. 1—8:

⁴ Նույն տեղում, ֆ. 222, ց. 1, դ. 132, թ. 1—4:

⁵ Նույն տեղում, Հուլիսից զերմանական իշխանությունները դատապարտվում էին դեպի Անդրկովկաս Թուրքիայի առաջնադաս զորքերով հարձակումներ ցուցաբերած հանցագործ աջակցության համար, հիշատակվում էր, որ Գերմանիան ստիպեց Բրեստի պայմանագրում կետ մտցնել Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերից ռուսական զորքը հանելու մասին, շեղվում էր, որ նույն Գերմանիան պետք է ներառեր Թուրքիայի վրա՝ Պարսի հետագա հարձակումներից, էքսցեսներից հետ պահելու, կանխելու «ոչ իրենց մեղքով պատերազմի մեջ ներգրավված լայն շրջանի» կոտորածները (Документы и материалы по внешней политике Грузии и Закавказья, Тифлис, 1919).

⁶ Հիմնավորված բողոքներով Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի իշխանություններին դիմեցին Կարսի Հայոց ազգային խորհուրդը, բարեգործական ընկերությունը, ուսուցիչների ինստիտուտը, փառատականների և այլ կազմակերպություններ, Բաթումի հազարավական կազմակերպությունները (Նույն տեղում, ֆ. 457, ց. 1, դ. 3, թ. 2, գ. 8, թ. 28—41):

է՛ր ղրկւ իրմ ին անթեղ հեռախոսը: Կարախանը պատվիրակութեանը ապահովել էր դիվանագիտական մի շարք փաստաթղթերով, անձնագրերով, անցադրերով, սահմանը՝ ճակատով առանց ստուգման անցնելու թույլտվութեամբ: «Այս և մնացած այլ խնդիրներում Կարախանը մեզ չափազանց մեծ աջակցութիւն ցույց տվեց, այնպես, որ ես չգիտեմ, թե առանց նրա օգնութեան մեր գնալու խնդիրն ինչպես կ'ընթերցէր»⁷—գրում է Զամալյանը Ազգային խորհրդին:

Աջակցեց նաև Պետրոգրադում շվեդական դեսպանը: Պատվիրակութիւնը Պսկսվի վարչով, դերսանական սպայի ուղեկցութեամբ, անցավ Դվինսկ, այնտեղից՝ Բեռլին, ուր հասավ ապրիլի 22-ին⁸: Այդ օրը արդեն Սեյմը հայտարարել էր Անդրկովկասի Ռուսաստանից անջատման, Անդրկովկասի դեմոկրատական ֆեդերատիվ հանրապետութեան ստեղծման մասին, որին հետամուտ էր Թուրքիան: Դա քաղաքական գծի վերագնահատում էր, ռուսական կողմնորոշումը գերմանականով փոխարինում, որն արվում էր ուժեղ դաշնակից գտնելու միտումով: Այդ, սակայն, Ազգային խորհրդի պատվիրակութեանը հայտնի չէր: Չսպասելով երկրորդ պատվիրակութեան ժամանելուն, որն այդպես էլ չեկավ, Ազգային խորհրդի պատվիրակները Բեռլինում ծավալեցին բուռն պորթուգալական:

Պատվիրակութիւնը կազմեց հուլիսի 2-ին Օսմանյան կայսրութիւնում հայերի վիճակի, թուրքերի կողմից Բրեստի պայմանագրի դրժման, թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժման, հայերին սպասվող նոր սպանդի վտանգի մասին: Հուլիսի 2-ին, ապրիլի 27-ին, մայիսի 3-ին և 4-ին Գերմանահայկական ընկերութեան կողմից հղվեցին գերմանական ռազմատաշին, էրա առանձին անգամներ, ականավոր քաղաքական գործիչների: Ապրիլի 28-ին, 29-ին, մայիսի 4-ին պատվիրակութիւնը հուլիսի 2-ին ներկայացրեց Գերմանիայի Արտաքին գործերի նախարարութեանը⁹, արեւելյան քաղաքականութեան հանձնաժողովին ընդարձակ տեղեկութիւններ տրամադրեց փետրվարյան հեղափոխութեան հետ ընկած ժամանակաշրջանում Անդրկովկասում ծավալված իրադարձութիւնների մասին, որը 1918 թ. մայիսի 4-ին հրապարակվեց առանձնատիպով¹⁰:

Հուլիսի 2-ին ղրկւ էր այն միտքը, որ XX դարում ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աշխարհ անխնա ոչնչացման հանձնվեց հայ ժողովրդի մեծ մասը, այն ժողովրդի, որն Ասիայի շեմին դարերի ընթացքում ներեայացրել է քրիստոնեական աշխարհը և եվրոպական քաղաքակրթութիւնը: Հայերը կարող էին հուսալ, որ Հոկտեմբերյան հեղափոխութեան հուլիսի 2-ի ղրկւ ինքնորոշման կարգախոսի և Բրեստի դաշնագրութեան շնորհիվ Հայկական

7 Նույն տեղում, ֆ. 222, ց. 1, գ. 132, թ. 4: Պատվիրակութեան ծախսերի համար Թիֆլիսում ստացված 70 հազար ռուբլուց 52 հազարը Դվինսկում փոխվեց գերմանական 52 հազար սարկով (Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 28, թ. 9ա):

8 Նույն տեղում, ֆ. 457, ց. 1, Գ. Մելիք-Ղարաբաղյանի նյութերի հավաքածու «Գերմանահայկական ընկերութեան փաստաթղթեր», Բեռլին, 1917 թ. հոկտեմբեր—1918 թ. հունիս, թ. 1—213:

9 Նույն տեղում, թ. 194—213: Հունգարիայի պետական արխիվ, հավաքածու Վիեննայի արքունական պետական արխիվ (այսուհետև W), քաղաքական արխիվ, X, պահպանակ 157, թ. 73—76 և հակառակ երես: Ուսումնասիրելով, 1110, «Ինքնուրույն շարժումը Կովկասում» վերատառութեամբ տպագրված «Ամենակարևոր իրադարձութիւնները» հաղորդումը ունի հետևյալ հատվածները. 1) Առաջին իրադարձութիւնները հեղափոխութեան բռնկումից հետո, 2) Կովկասյան առաջին կառավարութիւնը, 3) Կովկասյան երկրորդ կառավարութիւնը, 4) Թուրք-կովկասյան ռազմական իրադարձութիւնները և հաշտութեան բանակցութիւնները Թուրքիայի հետ, 5) Կովկասյան զինվորական խորհրդի լիազորութիւնը, 6) Կովկասյան բանակի մարտիկական թուրքիայի դեմ, 7) Կովկասի գլխավոր ժողովուրդների վերաբերմունքը Թուրքիային, 8) Ներքին ապագան և ընդհանուր իրավիճակը (ՀՀ Կողմ, ֆ. 222, ց. 1, գ. 654, թ. 1—3, 1ա, 2ա, 3ա):

10 Նույն տեղում, ֆ. 457, ց. 1, Գ. Մելիք-Ղարաբաղյանի հավաքածու, թ. 115—117:

հարցը գրական լուծում կստանա: Սակայն մեծ էր ժողովրդի հիասթափությունը, երբ նա իմացավ, որ Բրեստի դաշնադրությունը շրջանցեց Հայկական հարցը և հայերի վրձարը: Ավելին, պոկվեցին Ռուսաստանի ամբողջ երկրամասեր՝ նրանց թուրքական իշխանությանը ենթարկելու համար:

Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունը կարծում էր, որ Անդերկովկասում հայ ժողովրդի ապահովությունը կարող է երաշխավորվել միայն այն դեպքում, երբ Գերմանիան պահանջի Թուրքիայից «անմիջապես և հաստատորեն դադարեցնելու հարձակումը», երբ ի նկատի կտոնվեն հետևյալ կետերը.

1. Կարսի, Արդահանի և Բաթումի ազգաբնակչության ինքնորոշման իրավունքի իրագործումը, այն միտումով, որ ազգային սկզբունքը պահպանվի և հիստատական բնակիչներին թույլ տրվի մասնակցել հանրաքվեին: 2. Թույլ տրվի, որպեսզի թուրքերը որևէ պատրվակով անցնեն Բրեստի դաշնադրով ընդունված սահմանները: 3. Թուրքերը հրաժարվեն Կովկասի գործերին միջամտելուց: 4. Լիակատար երաշխավորություն բոլոր այն հայերի ապահովության համար, որոնք գտնվում են Տաճկաստանում կամ ցանկանում են վերադառնալ իրենց հայրենի վայրերը:

Պատվիրակության ներկայացրած փաստաթղթում շեշտվում էր. «Հակառակը այլևս չեն կարող հավատալ, որ այդ հնարավորությունները կտրվեն իրենց, եթե դրանք միայն Թուրքիայի խոստումներն են»¹¹:

Հայոց ազգային խորհրդի պատվիրակությանը սատար կանգնեց 1912 թ. Բեռլինում կազմակերպված Գերմանա-Հայկական ընկերությունը, որի անդամները քաջատեղյակ էին Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Այդ երևում է նաև գերմանական ռախսատադին ապրիլի 27-ին ուղղված փաստաթղթից՝ ստորագրված ընկերության քարտուղար քահանա Էվալդ Շտիրի կողմից: Փաստաթղթում բացահայտվում էին թուրքական ագրեսիվ գործողությունները Բրեստի պայմանագիրը կնքելուց հետո, կովկասահայերին սպառնացող աղետը, օսմանցիների զավթողական անլուսապ նկրտումները, թուրքական մոլեռանդությունը:

Արձանագրելով սպառնազին իրավիճակը, Գերմանա-Հայկական ընկերության ղեկավարները զգուշացնում էին, որ քրիստոնյաների և մահմեդականների միջև սկսված կոտորածը կտարածվի ամբողջ Կովկասում և դրա հետևանքով կկործանվեն բազմադարյան մշակութային արժեքներ, և ռեքոնստրուկցիաների ոչնչացումը ալո երկրներում իրյւս պարտազանցություն կարձանագրվի քրիստոնեական Գերմանիայի հուշամատյանում: Համոզված լինելով, որ միայն Գերմանիան հնարավորություն ունի Թուրքիային հրամայել դաշնադրությամբ որոշված սահմանները, Գերմանա-Հայկական ընկերության վարչությունը վճռականորեն գրում էր. «Գերմանիան պետք է պահանջի, որպեսզի թուրքերը հրաժարվեն Կովկասի ներքին գործերի մեջ խառնվելուց»:

Ռախսատագի առաջ հարց է դրվում առանց հապաղելու Հայաստան ուղարկել մի հանձնաժողով՝ տեղում Բրեստի դաշնագրի համապատասխան կետերի իրագործումը հսկելու համար¹²:

Ուղագրավ է նաև Գերմանա-Հայկական ընկերության մալիսի 3-ի հուշագիրը՝ «Հայկական հիմնահարցը» խորագրով: Վերլուծելով հայերի ռեզասպանության պատճառները և առանձնացնելով թուրքաթափածներին ու փախրստականներին՝ հայրենիք վերադառնալու անհրաժեշտությունը, որը մասամբ իրականացվեց ռուսաեան գործերի եղմից Արևմտյան Հայաստանը դրավելուց հետո, փաստաթղթի հեղինակները հիշում էին, որ Բեռլինի 1878 թ. վեհաժողովից հետո միջազգայնացված Հայկական հարցի կարող է խաղաղության հանգել, եթե Թուրքահայաստանում հայերի համար ազգային տարածք

¹¹ Նույն տեղում, թ. 118—122:

¹² Նույն տեղում, թ. 135—141:

ստեղծվի, լինի Լերաշխիք նրանց կյանքի, պատվի, գույքի ապահովության համար, հայ ժողովրդի վաղնջական բնակավայրերը միջազգային երաշխիք-ներով տրամադրվեն տեղահանությունից վերադարձող հայ ժողովրդի բեկոր-ներին: Արձանագրելով, որ դրա համար միայն Թուրքիայի համաձայնություն-նր թիչ է, Գերմանա-հայկական ընկերության վարչության ղեկավարներ վերո-հիշյալ փաստաթղթում գրում էին. «Երիտասարդ թուրքերը հաճախ են խոս-աացել հայերին՝ նրանց հետ գործելու և նրանց շահերը հարգելու: Այդպես ելավ պատերազմից առաջ և պատերազմի սկզբում: Սակայն հայերը փոր-ձից համոզվեցին, որ Երիտասարդ թուրքերի ձգտումը՝ ամբողջ թուրք պե-տության տարածքը մաքրելու ոչ թուրքական տարրից, ավելի ուժեղ է, քան իրենց բոլոր խոստումները»:

Գերմանա-հայկական ընկերությունը պահի անհետաձգելի խնդիրն էր համարում. 1) հայկական բնակավայրերը Թուրքիայում այնպես կազմակեր-պել, որպեսզի հայ ազդեցնակչության կյանքը, պատիվը և գույքը ապահով-վեր Գերմանիայի կողմից, 2) պահանջել Թուրքիայից, որպեսզի հարգի իրենց-կիտովակի հաշտության պայմանագիրը, որի համաձայն Կարսի, Ար-դահանի և Բաթումի շրջանների ազգաբնակչությունն իրավունք ունենա իր հա-տակության խնդրի վերաբերյալ ազատ կերպով իր կամքը հայտնել, 3) որ թուրքական դուրքը չպետք է ներխուժի հայաբնակ Կովկասի վայրերը, հատ-կապես Նրեանի նահանգ, 4) թուրքերը չպետք է խառնվեն Կովկասի ներքին գործերին¹³:

Գերմանա-հայկական ընկերության և Հայոց Ազգային խորհրդի պատվի-րակության ներկայացրած հուշագրերը լայնորեն քննարկվեցին ռալիստագի-ւնդամների, քաղաքական, հասարակական ճանաչված գործիչների, կուսակ-ցությունների ներկայացուցիչների հանդիպումների ժամանակ, պետական մարմիններում:

Մայիսի 2-ին ռալիստագի անդամների ժողովում Հայկական հարցի քնն-արկմանը մասնակցեցին քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության հիմ-նադիր, ռալիստագում կուսակցության պատգամավորական խմբի ղեկավար քահանա Ֆրիդրիխ Նոյմանը, պանգերմանիզմի տեսաբան Պաուլ Ռոհրբախը, կաթոլիկական կուսակցության ղեկավար էնցենբերգերը, սոցիալ-դեմոկրա-տական կուսակցության ղեկավարներ Շայդեմանը, Նոսկեն, Էբերտը, Զյուդե-կումը, ազատ մտածողներ Հաագեն, Ֆիշերերը, ազգային լիբերալ Ռեհենբերգը, ճանաչված գործիչներ Շյորեդեմանը, Մաքսիմիլիան Գորդոնը, ռալիստագի ուրիշ անդամներ¹⁴:

Չնայած արտաքին սիրալիրությանը, ռալիստագի պատգամավորներն Արևմտյան Հայաստանում հայերի նկատմամբ թուրքերի ոճրագործություն-ների մասին հայ պատվիրակների հուշագրերին և հարցադրումներին մոտե-ղան սկեպտիկորեն: Պաշտոնական Գերմանիան դործագրում էր ամեն ջանք, որպեսզի ազատագրվի այն համընդհանուր մեղադրանքից, թե Գերմանիան մեղ-սակից է հղել Թուրքիայում հայ բնակչության բնաջնջման գործում, պըն-դելով, թե Գերմանիան որքան էլ ազդեցություն ունենա Թուրքիայի վրա, հա-կադդեղ չի կարող:

Նկատի էր առնվում և գերմանական շահերի առկայությունը. մասնավո-րապես ան, որ Թուրքիան ուներ 2 միլիոն զորք, որը Գերմանիային հարկա-վոր էր Միջագետքի և Պաղեստինի ճակատում ընդդեմ անգլիացիների և Ֆրանսիացիների: Այդ իսկ պատճառով, գերմանական իշխանությունները չէին դանկանում, որ հայկական պատվիրակությունը Բեռլինում երկար մնար և հանդիպումներ ունենար մամուլի ներկայացուցիչների հետ, մղեր հակա-թուրքական քարոզչություն¹⁵:

¹³ Նոյն տեղում, Թ. 143—158:

¹⁴ Նույն տեղում, Գ. 222, Գ. 1, գ. 120, Թ. 86, Kaukasische Post, 20, VII. 1918:

¹⁵ Kaukasische Post, 20, VII. 1918, Մշակ, 10, VIII. 1918:

Պատահական չէր ռախստագի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ ֆոն Գեոպերտի զգուշացումը պատվիրակությանը, առաջին իսկ հանդիպման ժամանակ. «ոչ ոքի՝ բացի հերմանական, պաշտոնական ներկայացուցիչներից, մանավանդ մամուլին, չբացահայտել պատվիրակության ժամանելու նպատակը»¹⁶։ Դրա հաստատումն է նաև Գ. Մելիք-Ղարաբյուրյանի հայտարարությունը «կապկազիչ պոստ» թերթին. «Մամուլից խուսափում էինք»¹⁷։ Դա արվում էր դաշնակից Թուրքիային «չնեղացնելու», հասարակայնությանը, և ոչ միայն գերմանական, ճիշտ լրատվությունից հեռու պահելու, ճշմարտությունը թաքցնելու համար։ Մյուս կողմից, պաշտոնական հերմանական հաստատում էր իր քաղաքականությունը՝ Հայկական հարցում Գերմանիան հաստատում էր իր քաղաքականությունը՝ Հայկական հարցում չխառնվել Թուրքիայի գործերին, ապացուցում կենտրոնական տերությունների և այն մոտեցումը, որ Թուրքահայաստանի հարցը Օսմանյան կայսրության ներքին գործն է և չպետք է միջազգայնացվի։ Այդ տեսակետը իր պաշտպանությունն է գտել Բրեստ-Լիտվսկում։

Ռախստագի անդամների սկեսչտիկ մոտեցման պայմաններում հայա-նպաստ հնչեց Պաուլ Ռոհրբախի՝ Արևելյան Անատոլիայից հայերի տեղահանման ջատագովի ելույթը։ Նա կարծում էր, որ Գերմանիայի բարոյական պատասխանատվությունն է՝ վերջ դնել շարունակվող արյունահեղություններին և հավաստում տալ հայ ազգին, որ Գերմանիայի հովանավորության ներքո նա ազատ կմնա հետագա ոչնչացումից¹⁸։

Սակայն քողարկված էին մնում Ռոհրբախի արմատական շրջադարձի դրդապատճառները, նրա քաղաքական նպատակները՝ առաջին աշխարհամարտի նախօրյակին և պատերազմի առաջին տարիներին՝ մինչև Բոստոնի հաշտությունը։ Քողարկված էր մնում, որ Բրեստի դաշնագրով համազգերմանության և համաբլրքության ծրագիրն Անատոլիայի հարցում կատարված էր։ Արևմտյան Հայաստանը անցել էր Թուրքիային։ Բրեստի հաշտությունից հետո երևան էին հզոր մանու-թուրքական հակամարտությունները՝ լուգլեցություն ուղղությամբ (Կովկասի և Բաքվի, Անդրկասպյան երկրամասի) նկատմամբ մեկի և մյուսի նկրտումները։

Ըստ գերմանական քաղաքագետների նախադաստիարակման ծրագրերի Հայաստանը չպետք է անցնի Ռուսաստանի ձեռքը, քանզի տիրելով Հայաստանին, Ռուսաստանը միաժամանակ կգերիշխեր ամբողջ Փոքր Ասիայում Պարսից ծոցից մինչև Միջերկրական ծով, Արարատից մինչև Սուեզի ջրանցք իր ձեռքում կմիավորեր Անդրկովկասը, Հայաստանը, Հյուսիսային Պարսկաստանը։ «Եվ քանի որ քաղաքական անհրաժեշտությունից ելնելով, մենք պետք է պահպանենք Թուրքիան մինչև վերջին ժայռահեղություն, ապա մենք չպետք է թույլ տանք, որպեսզի Հայաստանն անցնի Ռուսաստանին»¹⁹, — գրել է Ռոհրբախը Այժմ Անդրկովկասի հարցում Գերմանիան ուներ նոր խնդիրներ։

Գերմանիայի պաշտոնական ներկայացուցիչները ոչ միայն Հայոց ազգային խորհրդի պատվիրակներին թույլ չէին տալիս բարձրաձայն խոսել Բեռլին դալու իրենց նպատակների մասին, այլև խանգարում էին կապահպանելու Թիֆլիսի ազգային խորհրդի, Կովկասի և Ռուսաստանի հետ։ Պատվիրակությունը պործում էր Կովկասում և Ռուսաստանում կատարվող իրադարձություններին անտեղյակ։ Պատվիրակությանը ոչ միայն չէր տեղեկացվում իրավիճակի մասին, այլև Գերմանիայի արտաքին գործերի նախա-

16 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 220, ց. 1, գ. 120, թ. 86։

17 Kaukasische Post, 20. VII. 1918, Մշակ, 10. VIII. 1918,

18 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 220, ց. 1, գ. 120, թ. 86, 86ա։

19 П. Рорбах. Война и германская политика. М., 1915; Архив внешней политики России, ф. ПА 1913, д. 347, с. 40—41; М. Павлович (Вольман). Борьба за Азию и Африку, Л., 1924, с. 56, 79.

րարությունը նրան գցում էր թյուրիմացության մեջ, նույնիսկ ապակողմնորոշում:

Իսկ ակնհայտ երևաց Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Կարոն Ֆոն Բուշեի հետ պատվիրակության անդամների մայիսի 4-ի հանդիպման ժամանակ և Դերմանիայի Արտաքին գործերի նախարարության մայիսի 8-ի պատասխան հուշագրում:

Ուղղունելով Հայոց ազգային խորհրդի՝ հայ ժողովրդի համար անչափ ցածր պահին գերմանական իշխանություններին լիակատար վստահություն մատուցելու փաստը, բարոն Ֆոն Բուշեն ծանուցեց, որ գերմանական կառավարությունը ցանկություն ունի, որպեսզի հայերը այն գավառներում, ուր սրանք բնակվում են, անցած տարիների սարսափելի դեպքերից հետո կրկին՝ անստորություն վայելեն և երկարատև ու խաղաղ հարաբերություններ ստեղծվեն քրիստոնեական ու մահմեդական ազգաբնակչության միջև: Համոզմունք հայտնելով, որ «Օսմանյան կայսերական կառավարությունը այդ ցանկությունը բաժանում է և որոշել է մեղմ վերաբերմունք ցուցաբերել հայերի՝ անդադար փերմանական կառավարությունը հայերին կշտամբում էր թուրքական առաջխաղացման միջոցին, ծրագրված իրենց հանդեպ թուրք բնակչության դեմ իբր ձեռնարկած բռնությունների համար: Միայն առավել արժանի է ուշադրության, — ասված է Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության մայիսի 8-ի հուշագրում, — որ գերմանական գործերը ամենախիստ կարգապահություն են պահպանել: Թուրքերը ցույց են տվել նույնիսկ հատուկ մեղմություն: Եթե թուրքական գործերի մոտենալու միջոցին կռիվներ են առաջ կիկ ազգաբնակչության զանազան տարրերի միջև, թուրքական գործերը դրա համար պատասխանատու լինել չեն կարող»²⁰: Որպես օրինակ բերվում էր Բաթումի պայքարը էնվեր փաշայի կողմից՝ ուղղված Կարսի, Արդահանի և Բաթումի հայերին՝ մնալ իրենց տեղերում, նրանց երաշխավորելով «ազատություն, կյանքի և գույքի ապահովություն»²¹: Նման ապահովություն՝ «ստացվում էր նաև «արևելաանատոլիական գավառներին» հայերին, սակայն վերոհիշյալ տարածքներում հայեր արդեն չկային կամ գրեթե չկային»²²:

Պատվիրակության իրազեկ դարձնելով Անդրկովկասում ապրիլի 22-ին նոր իշխանության՝ Անդրկովկասի ֆեդերատիվ դեմոկրատական հանրապետության ստեղծման, Բաթումում նոր բանակցություններ սկսելու մասին, որին մասնակցելու էր նաև գերմանական պատվիրակությունը՝ դեներալ Ֆոն Լոսովի գլխավորությամբ (գեներալը նոր փոխարինել էր դեսպանության խորհրդական Վալբուրգին), Բուշեն հայկական պատվիրակությանը խորհուրդ

²⁰ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 457, ց. 1, Գ. Մելիք-Ղարաբյուրյանի հավաքածու, Թ. 123—127: Փաստավորներն ապացուցում են, որ հայկական գլուխը նախ մտնում էին անկազմակերպ րաշխրդուկները, որոնք անում էին իրենց ավերիչ դործը, ապա՝ թուրքական կանոնավոր զորքը: «Առաջ շարժվող լուրջին միացան մահմեդականների և քրդերի հրոսակները, որոնք բազում հայերի սպանեցին, թալանեցին նրանց ղյուղերը, ավերեցին նրանց ունեցվածքը: Ինչպես երևում է, թուրքերի նպատակն է արմատախիլ անել քրիստոնյա մի ամբողջ ժողովուրդը, բնաջնջել նրան, որպեսզի այդ շրջանում հաստատի մահմեդական իշխանություն» (W—1110, պահպ. 157, Թ. 73):

²¹ Կոստանդնուպոլսից ապրիլի 22-ին Վիեննա՝ արաբիան գործերի նախարարություն հղած հեռագրում ասվում էր. «Եթե եմ գերմանական դեսպանից, որ էնվեր փաշան շատ գոհ է Բաթումում ստացած իր տպավորություններից: Գեներալ Ֆոն Զեկտը, որը նույնպես այցելել էր քաղաք, հայտնեց լաթ մասին, որ թուրքական զորքերը քաղաքը վերցնելու ժամանակ կարգին են վերաբերվել բնակչությանը, որը կազմված է սոսկ վրացիներից և մահմեդականներից» (W—1110, Թ. 369, պահպ. 157, հեռագիր, № 278, 7288, Բերա, 29. IV. 1918):

²² 1918 թ. ապրիլի 11-ին Կոստանդնուպոլսում ավստրո-հունգարական դեսպանի հետ ունեցած զրույցի ժամանակ թալեաթ փաշան հայտարարեց. «Հայերի նկատմամբ բռնի միջոցներ ներկայումս չեն գործածվել: Կարսի և Արդահանի շրջաններում, որտեղ սահմանից այն կողմ են անցել թուրքական զորքերը, այլևս ոչ մի հայ չկա» (W—1111, Թ. 67, 1918 թ., ապրիլի 11-ի № 234, № 6148 հեռագրերը):

էր տալիս «այսուհետեւ իրենց ցանկութիւններն ու առաջարկութիւնները՝ կարծում, Արդահանում և Բաթումում իրենց շահերի վերաբերմամբ, անել Անդրկովկասյան կառավարության միջոցով, որին իսկապես նրանք ենթակա են»²³։ Պարզ ասվում էր, որ Հայոց ազգային խորհրդի պատվիրակության առաջնությունը Բեռլինում ավարտված է։

Գերմանական իշխանությունների յուրքապաշտպան մոտեցումն ակնհայտ երևում է նաև նախարարության վերոհիշյալ հուշագրի վերջին «նախազգուշական» ձևակերպումից. «Ինքնըստինքյան հասկանալի պիլին, որ այդ բանակցությունների վրա վնասակար ազդեցություն կթողնի այն, եթե հայկական հրոսակները շարունակեն իրենց կոիվները և ի՞նչ շեղոք երկրներում շղարհարի հայկական քարոզչությունը»։ Ավելին, «ուղղակի ճակատագրական շղարհարի հայկական հաւերի համար, եթե կրկնվեն այն դործողությունները, որ կատարել են հայ հրոսակները Երզնկայում և եթե այն տեղերում, ուր հայերը մեծամասնություն են կազմում, հաւածանքներ սկսվեն առհասարակ ազգաբնակչության դեմ»։

Հայոց ազգային խորհրդին Բուշին հույս հայտնեց, որ «հայ ժողովուրդը չի խաբւի իր ականաւորների մեջ»²⁴ լավ իմանալով հանդերձ, որ Թուրքերը վաղուց խախտելով Բրեստի հաշտութեան պայմանագիրը, զեռ ապրիլ ամսին գրավել են ոչ միայն Բաթումը, Արդահանը, Կարսը, այլև գտնվում են Ալեքսանդրապոլի պատերի տակ ու պահանջում են Բաթում-Ալեքսանդրապոլ-Զուլֆա երկաթուղուցով ազատ երթևեկություն՝ իբրև ռազմական փոխադրումների նպատակով։ Արտաքին գործերի նախարարությանը քաջ հայտնի էր, որ Կոստանդնուպոլսում 1918 թ. ապրիլի 27-ին Գերմանիայի և Թուրքիայի կնքած համաձայնագրով նրանց միջև որոշվել էին կովկասում ազդեցության ոլորտները։ Այդ համաձայնագրով Թուրքիային էր անցել արդեն գրավված տարածքը՝ Ախալցխան, Ախալքալաքը, Բաթումը և դրեթն ումբողջ Հայաստանը, Ադրբեջանը։ Անդրկովկասի մնացած մասում, մասնավորապես Վրաստանում, պետք է գործեր Գերմանիան²⁵։

Պատասխանելով «հայ հրոսակների զազանություններին» կառավարութամբ Թուրք-գերմանական մեղադրանքներին, մայիսի 14-ի հուշագրում պատվիրակությունը պարզաբանում էր. «Նոդկալի գործերն ու կոտորածները հայերի բնակչության մեջ չեն և բայցի դրանից նրանք քաղաքականապես բուխվականաչափ հասունացած են հաշվի առնելու համար, որ այդպիսի միջոցներով նրանք կվնասեն սեփական շահերին։ Եթե վրիժառուության առանձին դեպքեր են պատահած եղել, մենք շատ ցավացինք։ Բայց և չի կարելի մոռանալ, որ խոսքը այն մարդկանց մասին է, որոնք անսահմանորեն վշտացած են, որոնց ընտանիքի անդամները սպանված, ողջված և քշված են, որոնց ունեցած-չունեցածը կողոպտված և որոնց գոյությունը հիմնովին քայքայված է»։ Զգտնելով լիակատար ըմբռնում գերմանական կառավարություն, կողմից, այնուհանդերձ, Ազգային խորհրդի պատվիրակությունը կայսրության արտաքին գործերի նախարարին հայտնում էր. «Մենք վերադառնում ենք Հայրենիք՝ մեր հուսերի մեջ ուժեղացած, որ գերման կառավարություն չի թողնի իր միժակի մեջ մի քրիստոնեական կուլտուրական ժողովրդի»²⁶։ Վստահութունը առարկայական բնույթ ստադավ պատվիրակության հեռագրում՝ Ժնև, դաշնակցության կուսակցության կենտրոն՝ Գերմանիայի և Թուրքիայի դեմ քարոզչությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին²⁷։

²³ ՀՀ ԿԳՊԱ, ֆ. 457, ց. 1, Գ. Մելիք-Ղարաբյուրյանի հավաքածու, ք. 123—127.

²⁴ Նույն տեղում, ֆ. 222, ց. 1, գ. 120, ք. 86ա.

²⁵ Г. В. Пипия, Политика Германии в Закавказье в 1918 г. (сб. док., Тбилиси, 1971, с. 75—83, 140—153, 155—160, 182—184).

²⁶ ՀՀ ԿԳՊԱ, ֆ. 457, ց. 1, Գ. Մելիք-Ղարաբյուրյանի հավաքածու, ք. 132.

²⁷ Kaukasische Post, 20. VII. 1918, Մշակ, 10. VIII. 1918.

Ավստրո-Հունգարական արխիվներում պահվող փաստաթղթերը վկայում են, որ Հայոց ազգային խորհրդի պատվիրակության գործունեությունը, մասնավորապես նրա հուշագրերն ու բանակցությունները հայտնի էին դառնում նաև Դերմանիայում Ավստրո-Հունգարիայի դեսպան Հոհենլոբին, նրա միջոցով՝ կառավարությանը։ Դեսպանը Վիեննա էր ուղարկում ոչ միայն զեկուցադրեր, այլև պատվիրակության և արտաքին գործերի նախարարության միջև փոխանակված հուշագրերի պատճենները։

Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար կոմս Բուրիանին զեկուցելով Հայոց ազգային խորհրդի պատվիրակության՝ ապրիլի 22-ին Բեռլին ժամանելու, նրա անձնակազմի և նպատակների մասին, դեսպանը գրում էր. «պատվիրակությունը իրեն անվանում է Հայոց ազգային խորհրդի պատվիրակություն, կաղմակերպություն, որը ներառում է ողջ Ռուսաստանը, այդ թվում Կովկասը», ցանկություն ունի «ընդունելության արժանանալ ռալիսկանցյների կողմից, թերևս բավական կլինեն, եթե պետական քարտուղարի տեղակալը նրան ընդունեն»²⁸։

Հոհենլոբին միաժամանակ զեկուցում էր, որ գերմանական զեկավառ շրջանները, որոնք պատվիրակության ժամանելու կապակցությամբ զգուշանում էին թուրքերի հետ հնարավոր բարդություններից, այժմ դժգոհ չեն պատվիրակության Բեռլինում գտնվելուց. «թվում է, հաջողվել է թուրքերին վերաբերող հարցերում հայ պատվիրակներին զիջողաբար տրամադրել»։

Հայկական պատվիրակությանը հայտնվել էր, որ թուրքական զորքերի առաջխաղացման շրջաններ մեկնած թուրքական բանակի գլխավոր շտաբի պետ Կեներալ Չեքտը, հյուպատոս Անհերսը և «Ֆրանկֆուրտեր ցեյտունգ» թերթի թղթակից Վայթսը միատեսակ հաղորդել են. «Ներկա առաջխաղացման ժամանակ թուրքական զազանությունների մասին լուրերն անհիմն են։ Թուրքերը պետք է փորձեն զգուշ, հանդուրժողական գործողություններով հայ բնակչությանը տրամադրել հնարավոր հանրաքվեի օջտին»²⁹։ Հիշյալ՝ ստացված հաղորդումների վրա հենվում էր նաև Բուրեն։

Սակայն «Ֆրանկֆուրտեր ցեյտունգ» թերթի թղթակից Վայթսի և երկու բարձրաստիճան թուրք սպաների հետ 1918 թ. ապրիլի 12-ից հունիսի 13-ը թուրքահայաստանի և Կովկասի շրջաններ այցելած Ավստրո-Հունգարիայի զինվորական շտաբի թղթակից դոկտոր Շտեֆան Շտայների զեկուցումից երևում է հակառակը։ «Քաղաքացիական և ռազմական պաշտոնյաները, — նշում էր նա, — ամեն օր մշակում էին մեզ, որպեսզի համոզեն, որ հայերը տիեզերքի ամենամեծ ոճրագործներն են, իսկ թուրքերը հայկական բարբարոսության անմեղ զոհերը։ Այն, որ թուրքերը 1915 թ. ողջ ժողովրդին թուրքատհայտոտում բնաջնջել են՝ ընդունեցին, սակայն այդ բացատրեցին որպես անհրաժեշտ կարգավորում։ Չէ՞ որ միայն հայերին են ցարդել, իսկ այսօրվա իրադարձությունների դեպքում խոսքը վերաբերում է մահմեդականներին և, անշուշտ, նրանց մեջ մեծ տարբերություն չկա»³⁰։ Կարևոր է նշել, որ այս տողերի հեղինակի նպատակը, ինչպես ինքն է գրում, եղել է «եվրոպական հասարակայնությանը տեղյակ պահել այն մասին, որ գրավված շրջաններում, ռուսների կողմից վարձված և հրահրվող հայկական ավազակախմբերը բարբարոսաբար են վերաբերվում մուսուլմաններին և այդ պատճառով թուրքերն իրավունք ունեն գիմնելու ծայրահեղ միջոցներին»։ Սակայն լինելով Արևելյան Հայաստանում նրանք համոզվել էին, որ բարբարոսները թուրքերն են։

²⁸ W-1112, քաղաքական արխիվ, X. 155, Հոհենլոբի զեկուցագիրը Բեռլինից Վիեննա, արտաքին գործերի նախարար Բուրիանին, 10 մայիսի 1918 թ. 53/PA 1918 թ. մայիսի 2-ի 2552 կից հավելված, թ. 425, 423։

²⁹ Նույն տեղում։

³⁰ W-1110, քաղաքական արխիվ, պահպ. X-156, 1918, հունիսի 27-ի № 65/Ք Կոստանդնուպոլսից հաղորդման հավելված, թ. 345։

Դերմանիան մեկ գումարտակ ուղարկելի Փոթի և զորք տա Վրաստանում դեսպան, Շուրենբուրգին՝ թուրքական հակահայկական վտանգը կանխելու, հայ ժողովրդին սպառնացող նոր կոտորածը արգելակելու համար։ Հայտնվում էր, որ Թալեաթի և էնվերի հավաստումները հայերին կեղծիք են, նրանք ցանկանում են վերացնել հայկական գավառները, նպատակ ունենալով զավթումն ու հայերի բնաջնջումը, իսկ գերմանական միջամտությամբ մեկ հարվածով կլուծվի Հայկական հարցի գծով աշխարհով մեկ Դերմանիայի հետ ուղղված քարոզչությունը և Հայաստանը անջակտելիորեն կկապվի Գերմանիայի հետ, Հավաստելով, որ Դերմանիան ճշատ է շահադրժան ծախսերի վիճակով, ուղում է հաշտության կնքման ժամանակ պահանջել Հայաստանին թողնել Պարոկաստանի մի մասը, Ուրմիան, Վանը, Լոսովը մասնաշրջություն հայտնեց Անգլիայի և Ամերիկայի նկատմամբ հայերի վերաբերմունքի կապակցությամբ, «Հայերի մոտ կա համակրանք դեպի նրանք, կան փաստեր»³⁸, — նշել է գեներալը։

Բաթումում տարվող բանակցությունների ընթացքն ավելի լայն թեմաներով Աղզային խորհրդի մայիսի 25-ի և 26-ի նիստերում։ Տեղեկացվեց գեներալ Լոսովի նամակի մասին, որում վերջինս հայտնում էր, որ եթե Բրեստ-Լիտովսկի պայմանները չկատարվեն թուրքերի էդուրից, նա հրաժարվում է միջնորդի իր մանդատից³⁷։ Աղզային խորհրդին հայտնի դարձավ Անգլիկոսի պատվիրակության կազմալուծման, Վրաստանի անկախության հայտարարության, Լոսովի հետ Չխենկելու Բեռլին մեկնելու մասին։ Խորհրդի նիստում ընթերցվեց Հ. Քաջաղնունու նամակը, որտեղ առաջարկվում էր Բեռլին ուղարկել պատվիրակություն հետևյալ կազմով՝ Հ. Օհանջյան, Ա. Զորաբյան, Հ. Բեկդադյան։ Նա նաև տեղեկացնում էր, որ հայկական պատվիրակություն Բեռլին ուղարկելուն դեմ են Ադրբեջանի աղզային խորհրդի ներկայացուցիչները և թուրքերը։

Մայիսի 26-ի նիստում Ա. Ահարոնյանը տեղեկացրեց գերմանական ներկայացուցիչների հետ իր նոր հանդիպումների մասին։ Թուրքերը ուզում են Ձևղ կոտորել, մենք անկեղծորեն չենք ցանկանում։ Բայց զորք չունենք դիմադրելու», — ասել են Դերմանիայի ներկայացուցիչները. Խ. Կարճիկյանը հայտնեց այն միտքը, որ թուրքերի աշխուժացումը կատարվում է Դերմանիայի դաժան սանկցիայով, «հենց դրա համար էլ գեներալ Լոսովը հետևում է Դերմանիա փոխել տալու այդ որոշումը»³⁸։

Թուրքական պատվիրակությունը պատճառաբանելով անշլիացիների աշխուժացումը Հյուսիսային Պարսկաստանում, մայիսի 26-ին վերջնադրի ձևով նոր պահանջներ ներկայացրեց. Շարուր-Նախալաքյադի, Երևանի, Նախիջևանի, էջմիածնի, Ախալքալաքի գավառների, Արեջասանդրապոլ ջաղաքի նկատմամբ։ Թուրքերը վերջնադրի ձևով Անգլիկոսյան կառավարությունից միաժամանակ պահանջեցին թուլլատրել անարգել ամբողջ Անգլիկոսի սերկաթգծով տեղափոխել զորք և զինամթերք, զորքերին տեղափոխել սինդատթերքով։ Նպատակը «հիմնավորված էր»։ «վերացնել ներքին խռովությունները», «պաշտպանել մուսուլմաններին, որոնք տանջվում են և հալածվում Բաքուում», զորք տեղափոխել Միջագետք³⁹։

Ֆելդմարշալ-լեյտենանտ Յո. Պոմյանկովսկին Կոստանդնուպոլսից հեռագրում էր Վիեննա. «Եթե թուրքերի ցանկությունը չկատարվի՝ 3-րդ բանակը անմիջապես հարձակման կանցնի»⁴⁰։

³⁶ Նույն տեղում, թ. 24—28։

³⁷ Լոսովը գերմանական կողմից նշանակվել էր հատկապես հաղթի առնելով այն հանգամանքը, որ նա թուրքերի հետ ունեցած երկարամյա անձնական կապերի շնորհիվ ավելի շատ ի վիճակի կլինի բանակցությունների ժամանակ նրանց խանդարելու շահագնացող պահանջներ գնելուց»։ (W-1110, քաղաքական արխիվ, Կոստանդնուպոլիս, 1918 թ., մայիսի 2, № 294851)։

³⁸ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 36—37։

³⁹ Кавказское слово, 31.V.1912.

⁴⁰ W-1110, X-155, № 2887, 30250, 13057, թ. 54—58.

Հունիսի 2-ին Բեռլինում ֆոն Քյուլմանը հանձնարարում էր տեղյակ պահել Բարձր Դռանը, որ Թուրքիան իրավունք չունի շրջանցելու իր դաշնակիցներին, պայմանագրեր կնքելու կովկասյան հանրապետությունների հետ, քանի որ դա հակասում էր 1916 թ. սեպտեմբերի 28-ին Իերմանիայի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրին⁴⁵։ Ակնհայտ է դառնում նաև պատճառը՝ հայերի դեմ գործադրվող վայրագությունների հետևանքով քաղաքակրթ աշխարհի զայրույթը Թուրքիայի և նրա դաշնակիցների դեմ։

Այդ օրերին արդեն Բեռլինում էին գտնվում Հայոց ազգային խորհրդի նոր պատվիրակության անդամներ Հ. Օհանջանյանը և Ա. Զուրաբյանը։ Նրանք Բեռլին ին ժամանել Դունիսի 3-ին։ Ա. Զամալյանը, Լ. Նազարյանը, Գ. Մելիք-Ղարադոզյանը մայիսի 30-ին մեկնել էին Բեռլինից։ Կիևում իմանալով Անդրկովկասյան իրադարձությունների և Բեռլին նոր պատվիրակության ժամանելու մասին, նրանք ցանկություն էին հայտնել վերադառնալ Գերմանիա՝ աշխատանքը շարունակելու համար։ Գերմանական դեսպանի կողմից Բեռլին մեկնելու թույլտվություն չստանալուց հետո պատվիրակության անդամները նոր փաստերով հազեցած հուշագիր հղեցին կանցլեր Հարտլինգին⁴⁶։

Այդ ժամանակ արդեն կնքվել էր Բաթումի դաշնագիրը, որը եռանդուն քննարկվում էր Բեռլինում ու Վիեննայում։ Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան դադարում էին, որ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեյջանի հետ Բաթումում կնքված պայմանագրերն ընդունելի չեն, քանի որ կնքվել են առանց դաշնակիցների մասնակցության։ Բեռլինում որոշվել էր Կոստանդնուպոլսում հրավիրել Լոնֆերանս՝ նվիրված կովկասյան հարցերի քննարկմանը։ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպաններին հանձնարարվել էր կոնֆերանսում հանդես գալ համախորհուրդ։

Թուրքիան կարծում էր, որ Անդրկովկասյան հանրապետությունների հետ կնքվելիք հաշտության բանակցությունները պետք է վարել միայն Քառյակ դաշինքի ակտիվությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեյջանի հանրապետությունների, Հյուսիս-Կովկասյան յուճականների ազգային միավորումների ներկայացուցիչներին նույնիսկ մասնակից չդարձնելով։

Գերմանիան մտադիր էր Կոստանդնուպոլիս հրավիրել նաև Ռուսաստանի և Ուկրաինայի պատվիրակություններին, որոնք ստորագրել էին Բրեստի հաշտությունը։ Գերմանիան կարծում էր, որ առանց Ռուսաստանի հնարավոր չէ լինել ռուսական նախկին ապրածքների հարցը։ Մյուս կողմից, Ռուսաստանի մասնակցությունը կարող էր հակակշիռ առաջացնել թուրքական չափը անցնող պահանջների նկատմամբ։ Կոնֆերանսը պետք է թուրքերին ստիպեր կատարելու Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանները, մի բան, որից Թուրքիան հրաժարվում էր, հակառակ նրան, որ Տրապիզոնում ինքն էր այդ պահանջում անդրկովկասյան կառավարությունից։

Այս բարդ իրադրության պայմաններում Բեռլինում սկսեց իր գործունեությունը հակակախ նոր պատվիրակությունը, որը սկզբում գործում էր Ազդալի խորհրդի, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության անունից։

Հունիսի 5-ին Հ. Օհանջանյանը և Ա. Զուրաբյանը ընդունվեցին արտաքին գործերի նախարարությունում՝ նախարար Ռոզենբերգի և փոխնախարար Գեոպերտի կողմից։ «Մեծ ուշադրությամբ լսելին և ասացին, որ արդեն

45 1916 թ. սեպտեմբերի 21-ին կնքված գերմանա-թուրքական համաձայնագրի դրույթները վերահաստատվեցին 1917 թ. նոյեմբերի 27-ի համաձայնագրով։ Առաջինի դեպքում ֆոն Քյուլմանը Գերմանիայի դեսպանն էր Թուրքիայում։

46 ՀՀ Կողմ, ֆ. 222, ց. 1, գ. 132, թ. 3-4։

արված են շատ ազդու քայլեր թուրքերի առաջխաղացումը կանգնեցնելու և գրաված վայրերում հայերին վնաս չբերելու համար և այդ նպատակին հասել են: Իսկ մեր պայմաններին, թե հարկավոր է, որ թուրքերը դադարեն գրաված երկիրը մինչև Բրեստի սահմանները, պատասխանեցին, որ դա այժմեական (actual) հարց չէ, թե նրանց նպատակն է Բրեստի սահմանները և պայմանները անխախտ պահել⁴⁷,—գրում էր Հ. Օհանջանյանը Բիոլինից Կոստանդնուպոլիս, այնտեղ գտնվող հայկական պատվիրակությանը՝ Ա. Ահարոնյանին և Ա. Խատիսյանին, հունիսի 26-ին*:

⁴⁷ Նույն տեղում, ք. 200, ց. 1, գ. 656, թ. 29—30:

* Հոդվածի շարունակությունը տես 1994 թ. № 1-ում: